ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2025թ. N -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 632-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Հավելվածի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին կամ վարչական շրջանի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով (քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման և սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվություններ ստանալու համար դիմումները կարող են ներկայացվել նաև թղթային եղանակով)՝ N 2 ձևին համապատասխան դիմում, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը.

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

4) դիմումատուի Երևան համայնքի հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենը.

5) օբյեկտի ճակատային մասի գունավոր լուսանկարը:»:

2) Հավելվածի 6-րդ կետից հետո լրացնել նոր 6.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1 Վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրվող թույլտվությունների դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը դիմումների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացնում է եզրակացություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 632-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2023 թվականի հունվարի 1-ից ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի և հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություններ ստանալու համար դիմումները ներկայացվում են միայն էլեկտրոնային եղանակով՝ https://dimum.yerevan.am/ առցանց հարթակի միջոցով, ինչի արդյունքում տնտեսվարող սուբյեկտները նշված թույլտվությունները ստանում են առցանց համակարգում լրացնելով հայտը և կատարելով առցանց վճարում:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 46-Ա որոշման հավելվածով հաստատված Երևանի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված է իրականացնել առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների հայցման և տրման թվայնացման գործընթացներ, ինչը կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտների աշխատանքի հարմարության և արդյունավետության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և թափանցիկության բարձրացմանը:

Վերոգրյալի կապակցությամբ 2025 թվականից նախատեսվում է հեղուկ վառելիքի վաճառքի, սեղմված բնական գազի վաճառքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի, խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունները ստանալու համար դիմումներն ընդունել և տրամադրել բացառապես էլեկտրոնային եղանակով՝ https://dimum.yerevan.am/ առցանց հարթակի միջոցով:

Երևանի քաղաքապետի 2015 թվականի հունիսի 4-ի N 1704-Ա որոշման հավելված 3-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում առևտրի, ծառայությունների և գովազդի ոլորտներում վարչական շրջանների ղեկավարներին օրենքով սահմանված կարգով պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքի և պարտադիր լիազորությունների կատարման նկատմամբ: Այս առումով նախագծով նախատեսվում է, որ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրվող թույլտվությունների դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչությունը դիմումների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացնում է եզրակացություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտում միատեակ ու միասնական միկրո և մակրո քաղաքականություն վարելու նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի եվ վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություն և լրացում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ